

«08» հոկտեմբեր 2018թ.

No 2547 - Ա

ԴԻՖԹԵՐԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 17-ի «2016-2020 թվականների իմունականխարգելման ազգային ծրագրին, իմունականխարգելման ազգային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկին, պատվաստումների ազգային օրացույցին, իմունականխարգելման ազգային ծրագրի ակնկալվող արդյունքներին և պատվաստման կամ կանխարգելման միջազգային վկայականի ձևին հավանություն տալու մասին» թիվ 10 արձանագրային որոշման IV բաժնի կետ 38-ը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 31-Ն՝ «Հայաստանի Հանրապետությունում դիֆթերիայի համաճարակաբանական հսկողություն» N 3.1.1-013-10 սանիտարահամաճարակային կանոններ և նորմեր» հրամանի պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Հնդկաստանում, Հարավային Աֆրիկայում, Եմենում, Եվրոպական երկրներում, այդ թվում նաև Ուկրաինայում և այլուր, դիֆթերիայի համաճարակային իրավիճակի վատթարացումը, Հայաստանի Հանրապետություն դիֆթերիայի դեպքերի ներկրման և հետագա տարածման կանխարգելման նպատակով.

## Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ) գլխավոր տնօրեն Արտավազդ Վանյանին, գլխավոր տնօրենի խորհրդական, Իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավար Գայանե Սահակյանին՝ ապահովել.

1) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում դիֆթերիայի կասկածելի դեպքի բնորոշման, վաղ հայտնաբերման և կանխարգելման վերաբերյալ խորհրդակցությունների կազմակերպումը և իրականացումը:

2. Հայաստանի Հանրապետության մարզպետարանների առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետերին, Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանին, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների տնօրեններին (համաձայնությամբ)

1) Ուժեղացնել հսկողությունը առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 31-Ն՝ «Հայաստանի Հանրապետությունում դիֆթերիայի համաճարակաբանական հսկողություն» N 3.1.1-013-10 սանիտարահամաճարակային կանոններ և նորմեր» հրամանի պահանջների կատարողականի նկատմամբ:

2) Ապահովել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բուժանձնակազմի մասնակցությունը դիֆթերիայի կասկածելի դեպքի բնորոշման, վաղ հայտնաբերման և կանխարգելման վերաբերյալ խորհրդակցություններին:

3) Պարզաբանել դիֆթերիայի տեսանկյունից անապահով երկրներից ժամանած քաղաքացիների պատվաստումային կարգավիճակն՝ ըստ գրավոր փաստագրումների: Ապահովել չպատվաստված, անհայտ, կամ թերի պատվաստումային կարգավիճակ ունեցող անձանց շրջանում պատվաստումների իրականացումը՝ համաձայն Պատվաստումների ազգային օրացույցի:

4) Յուրաքանչյուր կասկածելի դեպքի բոլոր կոնտակտավորների, ինչպես նաև վերջիններիս հետ շփված անձանց ցանկի տրամադրումը բնակության վայրի կամ սպասարկման տարածքի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին:

6) Առաջարկել դիֆթերիայի առումով անբարենպաստ համաճարակային իրավիճակ ունեցող երկրներ մեկնողներին, կամավոր սկզբունքով պետական պատվերի շրջանակներում պատվաստվել ԱԴՓ-Մ պատվաստանյութով:

7) Ապահովել բոլոր համայնքներում նպատակային քանակակազմերի շրջանում դիֆթերիայի դեմ պատվաստումներում առնվազն 95% ընդգրկվածություն, հայտնաբերել պատվաստումներից դուրս մնացած կամ թերի պատվաստումային կարգավիճակ ունեցող անձանց և հրավիրել պատվաստումների:

8) Ապահովել բնակչության շրջանում պատվաստումների կարևորության և դիֆթերիայի կլինիկական ախտանշանների վերաբերյալ մշտական իրազեկումը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա. ԹՈՐՍՅԱՆ

